Եւ զկնի յայտ լիցի ազնիւ եղբօրդ իմոյ ընկալայ զախրանիշ. թուղթն քոյ ձեռամբ ումեմն բ՛րեպաշտուհւոյ զգրեցել"ն ի հոկտեմ" 20 եւ ընթերցել" ծանեայ զամն եւ ուրախացայ ոչ սակաւ զի եթէ ունիցէի զ"զաւնոյ քաջ թեւս իսկոյն սլացե"լ այդր դադարելոց էի սա-կայն զինչ ար"րից. զի գոն քանի մի հիւկաւոր հոգալիք խնդրեմ ի բոլորից աղօթել վն տկարիս զի փութով յաջողեսցի. ամ ի աջողիլն եւ ի կատարիլն իսկոյն գտա-նիմ այդր եւ երբ մերձ լինիմ գալոյ զեկ առնելոց եմ փութով ազնւոյդ իմոյ. եմ ապաստան ի ձր մաղթանս ձեր. բաւէ խոհեմառատ մտացդ. բոլոր միաբանից ձր.յ վանիցդ հնոց եւ նորոցն մեծաց եւ փոքունցն, եւ յատ-կապէս հ. կոմիտաս ածաբան վրդպտին յոյժ կ"րօտիւ եւ մեծաւ սիրով զփրկչաւանդն ողջոյն մատուցանեմ ի բարին հրցանելով. ողջ լիցին քեւ հանդերձ ի յամայր ամն զօրացեալք տեամբ ամէն. գրեցաւ գիրս ի վնէժ. յամի. տն 1790 ի նոյեմբերի 3 շեշտակի ժամու.

կրտ փցուն արքեպսէ տփխ
իզու կ"րնեցի մելիքեան:„

Սակայն մահը կանխեց, 1790 դեկտ. 22ին վախճանեցաւ աղքատութեամբ իբր 55 տարեկան՝ վերջին Ս. Խորհուրդներն ընդունելով Հ. Պօղոս Վ. Մէհէրեանէ, որուն մտերիմն եղած էր արդէն Կարնոյ մէջ։ Ի մանկութենէ կը բաղ-ձար, ինչպէս կը պատմէ Հ. Աւգերեան, Մխի-թար Աբբահօր տապանին ի համբոյր գալ, եւ անոր համար Միաբանութիւնը զինքը թաղեց եկեղեցին, Մխիթար Աբբահօր տապանին քով։ Կը գրէ Հ. Աւգերեան.

"Ի 22 դեկտ. վախճանի ի Վենետիկ գե-րապայծառ կարապետ վարդապետ մելիքեան՝ արքեպիսկոպոսն տփխիսու, ազգական մանուկ